




Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆԸ

Հատուկ բերկրանքով, 1962 թվականի հոկտեմբերին, ներկա եմ եղել որպես հյուր Ազգային-եկեղեցական ժողովի նիստերին, որոնք տեղի էին ունենում էջմիածնում, Վեհարանի նոր շենքում:


Նոր Վեհարանի շինարարությունը ունի ավելի քան կես դարի պատմություն: Մեզ վիճակվել է մոտիկից ծանոթ լինել և նույնիսկ վերապրել այդ դժվարին և ծանր շինարարությունը:

Խորմյալ Հայրիկի կաթողիկոսության տարիներից էջմիածնի մայրավանքի և մանավանդ Գեորգյան ճեմարանի շրջակայքում մի շարք նվիրատվությունների միջոցներով կառուցվեցին մի քանի կարևոր շենքեր: 1910—1911 թվականներին կառուցվել է Մատենադարանի (այժմյան Հոգևոր ճեմարանի) շենքը՝ ճարտարապետ Պ. Զոհրաբյանի (Զուրաբյանի) նախագծով: Գեմարանի նախկին ննջարանների և հիվանդանոցի արևելյան կողմում 1911 թվականի սեպտեմբերի 24-ին հիմնադրվել և կառուցվել է ճեմարանին կից մանկավարժական թանգարանի շենքը: Այն կառուցված էր Մոսկվայի կազարյան ճեմարանի տեսուչ, ակադեմիկոս գիտնական Գևորգ Քանանյանի (1834—1897) այրու՝ Բարբարե Քանանյանի միջոցներով: Նույն տարիներին Մոսկվայում բնակվող Ալեքսանդր և Միքայել Թորոսյանները ձեռնարկեցին Գևորգյան ճեմարանի ֆիզիկական, քիմիական և այլ գիտությունների համար, այսպես կոչված «աստղադիտարան»-ի շենքի կառուցմանը: Աստղադիտարանը կառուցվում է Թիֆլիսում բնակվող ճարտարապետ Ա. Վ. Կալգինի նա-

խագծով: Կալգինը, որը «սիրահարված» էր Գալանեի տաճարի ճարտարապետության, օգտագործում էր այդ շենքի մեջ Գալանեի տաճարի խաչեր, «տրեֆլ»-ներ: Այդ շենքը 1914—1917 թվականների առաջին համաշխարհային պատերազմի պատճառով մնաց անավարտ: Այստեղ պետք է նշել և այն, որ բացի էջմիածնում կատարվող շինարարություններից, այդ տարիներին դպրոցա-հիվանդանոցային և այլ շինարարություններ կատարվում էին նաև Թբիլիսիում, Բաքվում և այլուր, որոնք կապված էին էջմիածնի և նրա ուսումնա-մշակութային գործունեության հետ:

Այդպես 1909 թվականի հունիսի 20-ին Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսի կողմից հիմքը դրվեց Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի նոր շենքի: Ներսիսյան դպրոցը, ինչպես և Վեհարանի շենքը, կառուցված են Ալեքսանդր Մանթաշյանի (1842—1911) նվիրատվությամբ: Ինչպես հայտնի է, Ներսիսյան դպրոցը գտնվում էր դեռ Ներսես Աշտարակեցու կողմից կառուցված շենքում, որը հիմնադրվել է 1822 թվականի փետրվարի 7-ին: Այդ շենքում դպրոցը բացվեց 1825 թվականին և այնտեղ մնում էր մինչև 1912 թվականին նոր շենքը տեղափոխվելը:

Ներսիսյան դպրոցի նոր շենքի ճարտարապետական նախագծի վերջնական կազմումը, ձևավորումը և կառուցումը հանձնարարվում է ճարտարապետ Պողոս Զոհրաբյանին, որը ճարտարապետ Մ. Ն. Նեպրիենկի ընկերակցությամբ, շինարարությունը վերջացնում է 1912 թվականին:



Ճարտարապետ Պողոս Զոհրաբյան

Ներսիսյան դպրոցի նոր շենքը, որը Թիֆլիսի ճարտարապետական դարձրերից մեկն է, ամբողջովին կառուցված է հայկական դասական ոճով: Նույն ոճով էր կառուցված նաև Զոհրաբյանի կողմից Թիֆլիսի Կամոյանց եկեղեցին:

Այդ տարիների շինարարությունների շարքում հատուկ հետաքրքրություն ունի էջմիածնում կառուցվող նոր Վեհարանի շենքը:

1910 թվականի մայիսի 15-ին, կաթողիկոսի հրավերով Թիֆլիսից էջմիածին էին ժամանել վերանորոգման և շինարարության հանձնաժողովի մի խումբ ճարտարապետներ և գեղարվեստագետներ: Նրանց թվում էին ճարտարապետներ Բաբանյանը, Տեր-Սարգսյանը, Մադաթյանը, նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանը, Ֆեթվաճյանը և ուրիշներ: Նույն օրը կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսի (հետագայում Գևորգ Ե Կաթողիկոս) նախագահությամբ և անմահ Կոմիտաս վարդապետի քարտուղարությամբ եկած մասնագետների, Սինոդի, հայրապետական դիվանի, վերանորոգման ու շինարարության հանձնաժողովի այլ անդամների մասնակցությամբ տեղի ունեցավ ընդլայնված խորհրդակցություն:

Մայրավանքի պարսպից դուրս պետք է սկսվեր նոր Վեհարանի շենքի կառուցումը ըստ ճարտարապետ Զոհրաբյանի նախագծի,

որն արդեն հավանություն էր գտել մասնագետ և օժանդակող հանձնաժողովների կողմից և հաստատվել Մատթեոս Բ Վեհափառ Հայրապետի կողմից:

Նոր Վեհարանի շենքի հանդիսավոր հիմնադրումը կատարվում է 1910 թվականի հունիսի 6-ին: Նույն օրը սկզբում կատարվում է հորմյան Հայրիկի տապանաքարի բացումը:


Հորմյանի տապանաքարը օրհնելուց հետո, եկեղեցական թափօրը Տրդատյան դարբասով ու Վաղարշապատի հրապարակով ուղղվեց նոր Վեհարանի տեղը: Այստեղ, գլխավոր մուտքի առաջ, Իջմիրյան կաթողիկոսը իջավ պատրաստված հիմքը և դրեց առաջին քարը: Ըստ եղած սովորության, հիմքի մեջ դրվեց պղնձյա տախտակ հետևյալ մակագրությամբ.

«Յամի Տեառն 1910 և Հայոց ՌՅՄԹ, ի 6 ամսեան յունիսի, յատուր հրաշափառ տոնի Հոգեգալստեան՝ ի Հայրապետութեան Տ. Տ. Մատթեոս Բ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, հիմն արկաւ Վեհարանիս, ծախիւք և արդեամբք մեծագործ բարեբարին Աղեփանդի Յ. Մանքաշյանի»:

Շինարարությունը գնում էր հաջող: 1914 թվականին Վեհարանի շենքը ավարտման մոտ էր: Մնում էին հիմնականում ներսի աշխատանքները, կահավորումը և այլն: Վրա հասավ 1914 թվականի համաշխարհային պատերազմը: 1915 թվականի մայիսի 10-ին էջմիածին հասան 50—60 հազար հայ գաղթականներ Վանից, Ալաշկերտից ու շրջակայքից: էջմիածնում ականատես եղա այդ ողբալի, աննկարագրելի տեսարանին: Պարտք եմ համարում հատուկ կարևորությամբ նշել, որ Մայր Աթոռը առաջին իսկ օրվանից, առանց տատանվելու ի սպաս դրեց իր բոլոր՝ թե՛ պարենային և թե՛ մարդկային միջոցները գաղթականներին պատասպարելու և փրկելու համար:

Պետք է հիշել, որ մինչև Թիֆլիսից, Բաքվից, Մոսկվայից և այլ քաղաքներից օգնություն հասնելը, էջմիածինը միայնակ էր սպասարկում գաղթականներին: Հատուկ եռանդով աշխատում էին Նղբայրական օգնության հանձնաժողովը և նրա նախագահ Դարեգին վարդապետ Հովսեփյանը (հետագայում Կիլիկիայի կաթողիկոս): Շուտով եկան տարբեր հասարակական կազմակերպություններ Մոսկվայի հայկական կոմիտեից, Թիֆլիսից, Բաքվից և այլ տարբեր հայաբնակ վայրերից: էջմիածին ժամանեցին հասարակական գործիչներ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, Պետական Դոմալի անդամ Հովհաննես Սաղաթելյանը, ականավոր քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը (հետագայում Նրեանի հա-

¹ «Արարատ», Վաղարշապատ, 1910 թ., էջ 502—503:



Նոր Վեհարանը

մալսարանի անդրանիկ ռեկտոր) և շատ շատերը: Այդ ժանր պայմաններում, Գևորգյան ճեմարանի շենքը մամոռյալին տրամադրվեց որբերին և գաղթականներին: Նոր Վեհարանի շենքը դեռ լրիվ չավարտված, նույնպես սկզբից տրամադրվեց գաղթականներին: Ապա Վեհարանում տեղավորվեցին համառուսական երկու հասարակական կազմակերպությունները՝ Համառուսական քաղաքների միությունը և Համառուսական Զեմստովոների միությունը:

Պողոս Ալեքսանդրի Զոհրաբյանը ծնվել է 1874 թվականի հունվարի 27-ին (փետրվարի 8-ին) Դարաբաղի Շուշի քաղաքում և տեղի ռեալական դպրոցում ստացել է իր միջնակարգ կրթությունը: 1893 թվականին Զոհրաբյանը բարձրագույն կրթություն ստանալու համար ընդունվում է Պետերբուրգի Քաղաքացիական ինժեներների ինստիտուտը, որն ավարտում է 1898 թվականին: Սկզբնական շրջանում նա աշխատում էր Կուրսկի երկաթգծի վարչությունում ավագ ճարտարագետի պաշտոնով: 1899 թվականից մինչև

1917 թվականը Զոհրաբյանը աշխատում է Թիֆլիսի քաղաքային վարչությունում շրջանային ճարտարագետի պաշտոնով: Այդ տարիներին նա նախագծում և կառուցում է մի շարք շենքեր ու կառույցներ, այդ թվում հիվանդանոցային շենքեր Թիֆլիսի հիվանդանոցային թաղամասում, Վոլոսկո-Կամսկի բանկի շենքը Կեցխովելի փողոցում և թվով մոտ 36 բնակելի շենք Թիֆլիսի տարբեր թաղամասերում:

Այդ ժամանակաշրջանում, Երևանի քաղաքային վարչության հանձնարարությամբ, Զոհրաբյանը նախագծում է Երևանի հիվանդանոցային արվարձանը չորս հիվանդանոցային շենքերով:

Զոհրաբյանը 1917 թվականից մինչև 1919 թվականը աշխատել է Վրաստանի քաղաքների միությունում գլխավոր ինժեների պաշտոնով: Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, նույն պաշտոնով նա աշխատել է Վրացական ՍՍՌ Առողջկոմատի կուրորտային վարչությունում և կատարել է մի շարք կարևոր կուրորտային և այլ շենքերի

նախագծումներ և կառուցումներ (Աբասթու-
մանում, Բորժոմում, Բակուրիանում, Գազ-
րայում և այլուր)։ Նույն տարիներին նա ղե-
կավարել է Անդրկովկասի Ժողկոմխորհի պա-
լատի շինարարությունը Թիֆլիսում և մի
շարք այլ տարբեր շենքերի նախագծումն ու
շինարարությունը։

Զոհրաբյանը զբաղվել է միաժամանակ
մանկավարժական և դասախոսական աշխա-
տանքով։ 1918—1941 թվականներին Զոհ-
րաբյանը դասավանդել է Թբիլիսիի մի շարք
բարձրագույն դպրոցներում։ Մոտիկից ծա-
նոթ լինելով ճարտարապետ Զոհրաբյանի
հետ, մասնավոր ինժեներական դպրոցում
նրա դասավանդելու տարիներին, պետք է հա-
տուկ նշել նրա տեսական և գործնական
պատրաստությունն ու եռանդը։ Բնավորու-
թյամբ համեստ էր, աշխատասեր ու հայրե-
նասեր։ Նա միշտ հատուկ ոգևորությամբ
խոսում էր իր ամենասիրելի կառույցների՝
էջմիածնի Վեհարանի ու Ներսիսյան դպրոցի
մասին։ Զոհրաբյանը մեծ մասնակցություն
ունեց նաև հայկական հասարակական կյան-
քում։

Բազմավաստակ ու հայրենասեր ճարտա-
րապետ Պ. Զոհրաբյանը վախճանվել է 1942
թվականի փետրվարի 21-ին։

Ճարտարապետի այրին՝ Ելիզավետա Կոնս-
տանտինովնա Զոհրաբյանը, ապրում է Թբի-
լիսիում, Կոջոբսկայա փողոցի № 3 տանը։

1957 թվականից հետո, Վեհափառ Հայրա-
պետը իրեն հատուկ եռանդով անցավ նոր
Վեհարանի հիմնական վերանորոգման։ Եվ
պետք է մասնավորապես նշել, որ այդ բոլոր
մեծ ծավալի ու դժվարին աշխատանքները
կատարվել են մեծ խնամքով ու ճաշակով։
Շինարարության բանվորներն ու վարպետ-
ները, իրենց ղեկավար ճարտարապետներով
ու մասնագետներով, ցուցաբերել են իմա-
ցություն և նրբություն՝ այդ փառահեղ շեն-
քին իրեն վայել տեսք տալու համար։

Հատուկ կարևորությամբ պետք է նշել
Վազգեն Շինարար Կաթողիկոսի բացառիկ ե-
ռանդն ու նախաձեռնությունը՝ այդ դժվարին
ու պատասխանատու գործն ի կատար ածե-
լու մեջ։

Ի՞նչ մեղքս թաքցնեմ. ես, լսելով կատար-
վող աշխատանքների մասին, որոշ թերահա-
վատությամբ էի վերաբերվում։ Իսկ այժմ,
որպես հայ մարդ, չեմ կարող չխոնարհվել
կատարված գործի ու նույն գործը կատա-
րողների առաջ, և առաջին հերթին՝ Վեհափառ
Հայրապետի առաջ։

